

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**ՀՀ ԱՆ պրորագիայի ծառայության 2018 թվականի ընթացքում
իրականացրած գործունեության վերաբերյալ**

ՀՀ ԱՆ պրորագիայի ծառայությունը բաղկացած է 11 տարածքային մարմիններից, որոնք գործում են Հայաստանի Հանրապետության մարզերում /թվով 10/ և Երևան քաղաքում: Մարզային բաժիններն ունեն 38 նստավայր:

Պրորագիայի ծառայությունն իրականացնում է ազատությունից զրկելու հետ չկապված քրեական պատիժներ՝ տուգանքը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, հանրային աշխատանքները, իրականացնում է վերահսկողություն պատժից պայմանական վաղաժամկետ ազատված, պատիժը պայմանականորեն չկիրառված և հղի կանանց կամ մինչև 3 տարեկան երեխա ունեցող կամ այլ հիմքերով պատիժը հետաձգված անձանց նկատմամբ, ինչպես նաև կազմում և ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներին ներկայացնում է խորհրդատվական զեկույցներ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ:

Ծառայությունում 2018թ.-ի ընթացքում գրանցվել են հետևյալ քանակությամբ պատիժներ և վերահսկողություններ, զեկույցներ՝

	Պատիժների և վերահսկողությունների տեսակները և քանակները							Ընդամենը
	Տուգանք	Որոշակի պաշտոններ	Հանրային աշխատանք	Պատիժը պայմ. չկիրառել	Վարքի վերահսկ.	Պատժից պ/վ ազատել	Պատժի հետաձգում	
2017թ. փոխանցված	1304	244	395	1264	7	170	11	3395
2018թ. ստացված	770	208	179	959	10	555	3	2684
Ընդամենը	2074	452	574	2223	17	725	14	6079

Զեկույցներ	
2017թ. փոխանցված	0
2018թ. ստացված	571
Ընդամենը	571

Ծառայությունում 2018թ-ի ընթացքում հաշվառվել է **6242** շահառու, որոնցից 582-ը կանայք են, իսկ 75-ը՝ անչափահաս, որից 4-ը աղջիկ: Նրանց նկատմամբ նշանակվել է 3100 պատիժ, 2979 վերահսկողություն, ընդ որում՝ 398 շահառու ունի կրկնակի, իսկ 5 շահառու՝ եռակի պատիժ և վերահսկողություն:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներից ստացվել է խորհրդատվական զեկույցներ տրամադրելու վերաբերյալ 571 ծանուցում, որոնցից 24-ը կանայք են:

Ծառայությունում 2018թ-ի ընթացքում արխիվացվել է 3320 անձնական գործ, որից 112 զեկույց, ընթացքի մեջ է 2922 անձնական գործ, որից 459 զեկույց:

Պրոբացիայի ծառայությունում 28.12.2018թ.-ի դրությամբ համաներումը կիրառվել է **1712** շահառուի նկատմամբ:

1. Տուգանք. 2074 տուգանքի ընդհանուր գումարը կազմում է 761.329.784 ՀՀ դրամ, որից փաստացի կատարվել է 524 տուգանք, փաստացի գանձված գումարը կազմում է 111.516.700 ՀՀ դրամ, իսկ մասնակի գանձվել է 57.830.546 ՀՀ դրամ, ընդհանուրը 169.347.246 ՀՀ դրամ: 426 տուգանք գտնվում է միջնորդություն ներկայացնելու ժամկետի մեջ, որոնց գումարը կազմում է 171.505.450 ՀՀ դրամ, 29 տուգանք տարաժամկետված է, որոնց գումարի չվճարված մասը կազմում է 8.666.200 ՀՀ դրամ, 18 տուգանքի կատարումը հետաձգվել է, որոնց չվճարված գումարը կազմում է 5.765.100 ՀՀ դրամ, 35 շահառուի մոտ տուգանքի կատարումը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստով /կալանավորվել են/, ընդհանուր գումարը՝ 17.614.000 ՀՀ դրամ, 958 տուգանք կարճվել է, որոնց չվճարված գումարը կազմում է 357.899.338 ՀՀ դրամ / 14 մահ, 29 վաղեմություն, 4-ը օրենքի փոփոխություն, **911-ը համաներում** /:

Ծառայությունում փաստացի ընթացքի մեջ է 513 տուգանք, որոնց գումարի չվճարված մասը կազմում է 206.050.750 ՀՀ դրամ:

2074 տուգանք պատժից 265-ը նշանակվել է կանանց, իսկ 4-ը՝ անչափահասների նկատմամբ:

2. Հանրային աշխատանքներ. Հաշվետու ժամանակաշրջանում հանրային աշխատանքների ձևով պատիժ է նշանակվել 574 շահառուի նկատմամբ. որից 95 անձնական գործ գտնվում է ընթացքի մեջ, որոնցից ներկայումս աշխատում են 35-ը, 22-ի վերաբերյալ կնքվում են պայմանագրեր, իսկ 38-ը՝ չեն աշխատում /15-ը հետախուզում, 14-ի վերաբերյալ ներկայացվել է պատիժը փոխարինելու միջնորդություն, 7-ը բողոքարկվել է վերաքննիչ դատարան, 2-ի պատիժը ընդհատված է/, 186 հանրային աշխատանքներ փաստացի կատարվել են, 73-ի պատիժը կասեցվել է /72-ը գտնվում են ազատագրկման մեջ, 1-ը գտնվում է զինվորական ծառայության մեջ /, 201-ի պատիժը կարճվել է /3-ը մահ, 2-ը դատարանի որոշմամբ, 2-ը վաղեմությամբ, **194-ը համաներում**/, 11 շահառուի պատիժը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստով /կալանավորվել են/:

574 հանրային աշխատանքներ պատժատեսակից 38-ը նշանակվել է կանանց նկատմամբ:

Հանրային աշխատանքներ պատժատեսակի իրականացումն ապահովելու և այն առավել հանրօգուտ դարձնելու նպատակով Պրոբացիայի ծառայության բաժինները համագործակցում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հետ, որոնց հետ կնքվում են պայմանագրեր, հետագա գործընթացի կազմակերպման նպատակով:

3. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատիժ կրող շահառուների թիվը կազմում է 452, որոնցից 293-ի գործերը գտնվում են ընթացքի մեջ, հաշվառումից հանվել են 154 շահառու՝ պատիժը փաստացի կատարելու հիմքով, 2-ը կասեցված է դատարանի որոշմամբ, 3 անձնական գործ կարճվել է՝ 1-ը շահառուի մահվան հիմքով, **2-ի նկատմամբ կիրառվել է համաներում,** որպես հիմնական պատիժ:

452 որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատժից 35-ը նշանակվել են կանանց նկատմամբ:

452 որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատժից 336-ը վերաբերվում են տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելուն, իսկ 116-ը՝ այլ գործունեությունից:

4. Վերահսկողություններ. 2223 շահառուի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, որոնցից ընթացքի մեջ են 1247-ը, 737-ի նկատմամբ սահմանված փորձաշրջանի ժամկետը փաստացի ավարտվել է, 201-ի փորձաշրջանը կարճվել է / 3-ը նոր դատավճիռ, 6-ը մահվան հիմքով, **191-ը համաներում/**, 21-ի նկատմամբ փորձաշրջանը դադարեցվել է նոր հանցանք կատարելու հիմքով /կալանավորվել են/, 9-ի փորձաշրջանը վերացվել է բաժանմունքի միջնորդության հիման վրա:

2223 փորձաշրջանից 205-ը նշանակվել են կանանց, իսկ 54-ը՝ անչափահասների նկատմամբ:

Ծառայությունում հաշվառված 18 անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է կիրառվել է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց, որից 4-ը աղջիկ:

Փորձաշրջանի մեջ գտնվող 47 շահառու զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության:

Փորձաշրջանի մեջ գտնվող 44 շահառուի անձնական գործերը ստացվել են ՀՀ ՊՆ տարբեր զորամասերից:

Վերահսկողությունից խուսափող 30 դատապարտյալ գտնվում է հետախուզման մեջ:

----- Ազատագրկման ձևով նշանակված պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատված դատապարտյալներից պրոբացիայի ծառայությունում, ըստ ստացված որոշումների, հաշվառվել է 725 շահառու, որոնցից 32-ի նկատմամբ վերահսկողությունն ընթացքի մեջ է, 270-ը՝ փաստացի ավարտվել է, իսկ 4-ի դատապարտյալի նկատմամբ վերահսկողությունը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստի հիման վրա /կալանավորվել են/, 2-ի փորձաշրջանը վերացվել է վերաքննիչ դատարանի որոշմամբ, **414 շահառուի նկատմամբ կիրառվել է համաներում** և նրանց նկատմամբ վերահսկողությունը դադարեցվել է:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատվածներից 661-ը տղամարդ են, իսկ 64-ը կին:

Վերահսկողությունից խուսափող 2 դատապարտյալ գտնվում է հետախուզման մեջ:

----- Պրորագրայի ծառայությունում հաշվառված են պատժի կրումը հետաձգված 14 շահառու, որոնցից 13-ի պատիժը հետաձգված է հիվանդության պատճառով, 1-ը ունի մինչև 3 տարեկան երեխա:

Պատժի կրումը հետաձգված 14 շահառուից 9-ը տղամարդ են, իսկ 5-ը կին:

Ձեկույց

2018թ. ընթացքում ստացվել է զեկույց տրամադրելու վերաբերյալ 571 ծանուցում, որոնցից 459-ը գտնվում են ընթացքի մեջ, 327-ի վերաբերյալ ներկայացվել եզրակացություն՝ (113-ը դրական, 214 բացասական):

2017թ. և 2018թ ընթացքում ստացված պատիժների և վերահսկողությունների համեմատական

	Պատիժների և վերահսկողությունների տեսակները							Ընդամենը
	Տուգանք	Որոշակի պաշտոններ	Հանրային աշխատանք	Պատիժը պայմ. չկիրառել	Վարքի վերահսկ.	Պատժից պ/վ ազատել	Պատժի հետաձգում	
2017թ.	2365	367	534	2017	12	267	10	5560
2018թ.	2074	452	574	2223	17	725	14	6079
Տարբերությունը	-291	+85	+40	+206	+5	+458	+4	+519

Տուգանքների գանձման համեմատական

2017թ.			2018թ.		
	Քանակ	Գումար		Քանակ	Գումար
Ստացվել է	2365	851.087.683	Ստացվել է	2074	761.329.784
Կատարման փուլ	1304	561.866.550	Կատարման փուլ	513	206.050.750
Փաստացի կատար. է	727	171.643.800	Փաստ. կատար. է	524	111.516.700
Կարճվել է	106	33.406.000	Կարճվել է	958	357.899.338
Փոխարինվել է հանր. աշխատանքների	228	84.171.333	Փոխարինվել է հանր. աշխատանք.	79	28.032.450

2017թ. և 2018թ ընթացքում ստացված զեկույցների համեմատական

		2017թ.	2018թ.
Ստացվել է		0	571
Ավարտված	դրական	0	113
	բացասական	0	214